

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ—ՔՆՆԱԳԱՏԱԿԱՆ

ԵՐԵՔ ԽՄԲԵՐԳ

Մշակեց եւ ներդաշնակեց Ս. Էջմիածնի միաբան Կեորգ սրկ.
Չեօրէքչեան. Պետերբուրգ. զին. 70 կ.

Անձանօթ չէ հ. Գէորգ սարկ. Չեօրէքչեանը, ս. Էջմիածնի համբաւաւոր միաբաններից, իր բարձր երաժշտական կրթութիւնը ստացել է արտասահմանում և երկար տարիներ երաժշտութիւն դասաւանդել Նոր-Նախիջևանի թեմ. Հոգևոր դպրոցում. երաժշտական գործունէութեան գլխաւոր կենտրոնը եղել է Նոր-Նախիջևանը, որտեղ և իր բոլոր հեղինակութիւնները դեռ չսպազբուած հրապարակ է հանել խմբերի միջոցով, համերգներում և երեկոյթներում:

Այդ հեղինակութիւններից է «Երեք խմբերգը», որի մէջ պարունակուած է 1. Տէր կնոյս—մեներգ և խմբերգ դաշնամուրի նուագակցութեամբ, զրուած ֆա մինօրով. 2. Երբ որ բացուին—երկերգ I և II Սօսրանի համար դաշնամուրի նուագակցութեամբ, զրուած ընդ մինօրով. և 3. Մայր արաքսի—երկերգ սօսրանի և ալտի համար, դաշնամուրի նուագակցութեամբ, զրուած ֆա մինօրով. բազմաթիւ հեղինակութիւններից միայն այս երեքն է առ այժմ լոյս տեսել որպէս նմուշ:

Առաջինը որպէս ազգային օրհներգ, իսկ երրորդը որպէս Գամառ Քաթիպայի անմահ Մայր-Արաքսին ըմբռնուած է ամենայն հարազատութեամբ. խօսքն ու դաշնակը լրացնում են միմեանց: Երեք խմբերգը իր վրայ կրում է վարպետ զրչի զրոյմն և իր սլառուաւոր տեղը կգրաւի մեր Հայ երաժշտական գրականութեան մէջ:

Յանկալի է օր առաջ տեսնել հրատարակուած հայր Չեօրէքչեանի միւս երկերը:

Ռուբէն արեղայ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՊԱՐԵՐ

Դաշնամուրի համար հեղ. Ս. Բաբխուղարեանի. Պետերբուրգ. զինը 4 ո.

Քիչ չեն այն երաժիշտները, որոնք զբաղուել են արեւելեան եղանակներով, մանաւանդ Ռուբինշտէյնը, որը իր ուրոյն տեղն ունի զրուած արեւելեան եղանակների ուսումնասիրութեամբ և մշակմամբ: Հետզհետէ լայն ծաւալ է ստանում և շատ ու շատ երա-